



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՈՒԺԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բուժական համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Բուժական, (093)540802, bujakanhamajng@mail.ru

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

19 օգոստոսի 2014թվական N 18-Ա

**ԲՈՒԺԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 7-ԴԴ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի պահանջով համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել համայնքի ավագանու 2014 թվականի օգոստոսի 19-ի թիվ 7-րդ արտահերթ նիստի օրակարգը.

1) Բուժականի բժշկական ամբուլատորիա փակ բաժնետիրական ընկերությունը Բուժականի համայնքային ոչ առևտրային կազմակերպության վերակազմավորելու և ուժը կորցրած ճանաչել Բուժական համայնքի ավագանու 2014 թվականի հուլիսի 10-ի «Բուժականի բժշկական ամբուլատորիա փակ բաժնետիրական ընկերությունը Բուժականի համայնքային ոչ առևտրային կազմակերպության վերակազմավորելու մասին» N 13-Ա որոշումը:

Կողմ -4

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՄԱՆՍՈՒՐ

2. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԶՈՀՐԱԿ

3. ՄԻՍԱԿՅԱՆ ԱՐԹՈՒՐ

4. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ



**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱՐԵՆ ԳԱԼՍՅԱՆ**



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՈՒԺԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ  
ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բուժական համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Բուժական, (093)540802, bujakanhamajnq@mail.ru

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

19 օգոստոսի 2014թվականի N 19-Ա

**ԲՈՒԺԱԿԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ  
ԲՈՒԺԱԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ  
ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՈՒՃԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼ ԲՈՒԺԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ  
ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՄԻ 10-Ի «ԲՈՒԺԱԿԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ  
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՒԺԱԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ  
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 13-Ա  
ՈՐՈՇՈՒՄԸ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության « Քաղաքացիական օրենսգրքի» 63-րդ հոդվածի 1-ին մասի «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի «Պետական ոչ առևտրային կամակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի դրույթներով համայնքի ավագանին որոշում է՝

1. Բուժականի բժշկական ամբուլատորիա փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ ՓԲԸ) վերակազմավորման ձևով վերակազմակերպել Բուժականի համայնքային ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ ՀՈԱԿ):
2. Համայնքի ղեկավարին՝
  - ա) մեկամսյա ժամկետում կազմել և հաստատել ՓԲԸ վերակազմավորման կարգը և պայմանները, տեղաբաշխված բաժնետոմսերի և այլ արժեթղթերի փոխարկման կարգը.
  - բ) հաստատել ՓԲԸ գույքի և գույքային իրավունքների՝ ՀՈԱԿ-ին փոխանցման ակտը, որում առկա են վերակազմակերպվող ընկերության գույքի և պարտատերերին ու պարտապաններին վերաբերող բոլոր պարտավորությունների իրավահաջորդության մասին դրույթներ.
  - գ) կայացնել ՀՈԱԿ-ի ստեղծման մասին որոշումը, կազմել կազմակերպության կանոնադրության նախագիծը և ներկայացնել ավագանու հաստատմանը.
  - դ) կազմել համայնքային կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և ամրացվող՝ համայնքին պատկանող գույքի կազմը և ներկայացնել ավագանու հաստատմանը
3. Կասմակերպության կառավարման, ինչպես նաև՝ «Պետական ոչ առևտրային

